

У НАС В ГОСТЯХ

«ՃՊՈՒՌՆ ՈՒ ՄՐՁՅՈՒՆԸ» ԱՌԱԿԸ ՊԱՏՎԱԿԱՆ
ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

Մ. Մ. ԳԻԼԱՎՅԱՆ

 ORCID: 0000-0002-0905-0042

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ

Հոդվածում քննության են առնվում նորագույն շրջանի հայ մանկագիր Պատվական Խաչատրյանի առակ-բանաստեղծության դաստիարակչական, ճանաչողական նշանակության, գեղարվեստական յուրահատկությունների վերաբերյալ հարցերը: Անբան ճպուռի և ժրջան մրջյունի հակադրության միջոցով Պ.Խաչատրյանը որոշակի վերաբերմունք է մշակում ծուրության և աշխատասիրության հանդեպ: Նա ընթերցողներին խրատներ ու խորհուրդներ չի տալիս, այլ գեղարվեստական պարզ ու մատչելի եղանակներով քննադատում է մարդկային բնավորության արատավոր գծերն ու հատկանիշները՝ եզրակացությունները թողնելով ընթերցողներին: Մեծ է առակի դերը թե՛ փիլիսոփայության, թե՛ հոգորբանության մեջ: Նշելով նրա դաստիարակչական նշանակությունը մանուկների ձևավորման վրա՝ մեծահասակների համար կարող ենք դիտարկել որպես իրավական կամ հռոմեական մաքսիմներից մեկը:

Բանալի բառեր և արտահայտություններ. բանասիրություն, առակ, պոեմ, ժամանակակից, նորագույն շրջան, բանավոր ստեղծագործություն

Հոդվածում անրադառնում ենք Պ.Խաչատրյանի մանկապատանեկան պոեզիայի յուրահատկությունները, նրա դերը մանուկների դաստիարակության գործում:

Մանուկ ընթերցողներին հասցեագրված Պ.Խաչատրյանի «Ճպուռի վերջը» բանաստեղծությունը ընդգրկված է «Բարի արև» ժողովածուում:

Դասականների օրինակով Պ.Խաչատրյանի մոտ հանրահայտ թեման ու պոեմեն ներկայացվում է լրացումներով, փոփոխություններով, ժամանակակից իրականությանը բնորոշ պատկերներով:

Առակի բովանդակությունը պայմանավորված է ռեալ իրականությամբ և ներկայացվում է նոր տարբերակով, որի մեջ ճիշտ է

գաղափարը և սյուժեի կառուցվածքը հիմնականում պահպանվում են, ընդհանուր՝ մոտիվները կրկնվում, սակայն ներմուծման ձևը տարբեր է, գաղափարը ներկայացվում է նոր տեսանկյունով, սյուժեն լիովին թարմացվում է:

Սույն հոդվածի նպատակն է երկայացնել Պ.Խաչատրյանի առակ-բանաստեղծությունը, և ցույց տալ այդ ստեղծագործության արդիականությունը, ժամանակակից հարաբերությունները, ճանաչողական և դասիարակչական նշանակությունը:

Դասական մանկագրությունը, որը հենվում էր անձնավորության ձևավորման օրինաչափությունների խոր իմացության և տարիքային տարբեր խմբերի ընթերցողների նկատմամբ անհատական մոտեցումների վրա, լայնորեն օգտագործում էր ժողովրդական բանահյուսության թեմաներն ու մոտիվները, որոնք ոգեշնչման անսպառ աղբյուր են արվեստի և գրականության ամենատարբեր ճյուղերի համար:

Դասական մանկագրության մեջ ժողովրդական բանահյուսության թեմաների ու մոտիվների մշակումներն ունեն արդիական խնդիրներով պայմանավորված որոշակի նպատակադրումներ:

Գրողներից շատերը ելնում էին ժամանակաշրջանի բարոյական, գեղագիտական, գաղափարական պահանջներից և հիմնական շեշտը դնում բանավոր ստեղծագործության բովանդակության նորովի արծարծումների վրա:

1808 թվականին լույս է տեսել Ի.Ա. Կռիլովի «Ճպուռն ու մրջյունը» առակը: Սակայն Կռիլովը չէր այս սյուժեի ստեղծողը, նա թարգմանեց Ժան դը Լաֆոնտենի «Ցիկադան և մրջյունը» առակը որն, իր հերթին սյուժեն փոխառեց VI-րդ դարի առակագիր Եզոպոսից:

Ռուս և եվրոպական գրողները, օրինակ իրենց մշակումներում հետապնդում էին ճանաչողական նպատակներ նրանց համար ժողովրդական բանավոր ստեղծագործությունը հիանալի միջոց էր ընթերցողի մեջ պատմական անցյալի նկատմամբ հետաքրքրությունը բարձրացնելու համար: Այս առումով ուսանելի է հայ դասական մանկագրության փորձը:

Թե Խ.Արքովյանը, թե Հովհ.Թումանյանը, Ղ.Աղայանը և Ա.Խնկոյանը բանահյուսությունը ոչ միայն այդ հետաքրքրության

բարձրացման, այլև ազգային ոգու ամրապնդման, անցյալի հերոսական էջերի արդիական լուսաբանման միջոցով պատմական հիշողության թարմացման խնդիր էին հետապնդում:

Շարունակելով Խ.Աբովյանի, Հովհ.Թումանյանի, Ղ.Աղայանի, Ա.Խնկոյանի ժողովրդական անսպառ գանձարանից օգտվելու ավանդույթներն ու փորձը՝ նորագույն շրջանի մանկագիրները հարստացնում էին իրենց գինանոցը թեմատիկ և ժանրային առումով [4, 347]:

Ժողովրդական բանահյուսության ավանդույթները նորագույն շրջանի մանկական գրականության մեջ շարունակվում են տարբեր կերպ. մի դեպքում բանաստեղծները մշակում են «թափառող սյուժեները» ու ստեղծում իրենց տարբերակները, մի այլ դեպքում հեքիաթների, առակների գործողությունները տեղափոխվում մեր օրերը, սյուժեները հարստանում նոր դրվագներով ու ճյուղավորումներով, ընդլայնվում բանահյուսական ժանրերի ավանդական սահմանները, ստեղծագործությունը հարստացնում բանահյուսությանը յուրահատուկ արտահարտչամիջոցներով, կերտում նոր ձևեր ու մոդելներ:

Այս առումով ուշագրավ է Պատվական Խաչատրյանի փորձը [1, 15]:

Պատվական Խաչատրյանի ստեղծագործություններում հանրահայտ թեմաներն ու սյուժեները ներկայացվում են նոր լրացումներով, ժամանակակից իրականությանը բնորոշ պատկերներով:

«Ճպուռն ու մրջյունի» սյուժեի լրացումներով, նոր տարրերի ներմուծմամբ Պ.Խաչատրյանը բազահայտում է ժամանակակից հարաբերություններ, ստեղծում է ժամանակակից միջավայր, կոլորիտ:

Նորովի մեկնաբանությամբ ներկայացնելով առակը հեղինակը նաև վերնագրային փոփոխություն է անում՝ «Ճպուռի վերջը»:

Մրջյունը քանդում է հին տուն ու թթենու տակ նորն է կառուցում.

Ինչիդ է պետք, միջնորդի:
- Ամուսնանամ ես պիտի,
Երեխաներ ունենամ:
Իսելք հավաքիր. բարեկամ,

Ճպուռին տարօրինակ է թվում տեսակը պահպանելու. «Ցեղսորհն է, այ սանիկ», կամ՝ «Ընտանիքը ցավ է նոր, Ուսի բեռ է ահավոր»:

Մի այլ դեպքում՝ «Կինն ինչ է որ՝ վզի թոկ», մարդավարի ու ապահով ապրելու, ամեն ինչ աշխատանքով ձեռք բերելու մրջյունի ցանկությունները: Մեզ քաջ հայտնի ճպուռի օրինակով

...ինքն իրեն մոռացած, հոր քսակը լայն բացած,

Աջ խմում էր, ձախ լափում

Թրիվ գալիս ծովափում,

Ու պարում էր շատ հանգիստ

Էլ վերվերի, թվ թվիստ... [2, 21]

Հանգուցալուծումը կատարվում է դասական օրինակով, բայց ժամանակին յուրահատուկ հանգամանքներում, բնորոշ իրավիճակում. անբան ճպուռը դառնում է մուրացկան «Հյուրասիրեց ճպուռին, Հետը դրեց թարմ լավաշ, Ծոր-մոր դրեց հնամաշ:

Հաց էր մուրում դռնե դուռ,

Սրտում կսկիծ ու մրմուռ

...

Միտք էր անում՝ ինչ անի,

Գուցե իրեն սպանի,

Բայց թեկուզ ծեր ու անուժ՝

Կյանքը թանկ էր ու անուշ [3, 8]:

Այնուհետև՝

Վերջին ուժ սպառեց,

Շունչը փչեց ու սառեց:

Ժողովրդական բանահյուսությունը ժողովրդի չգրված պատմությունն է, կյանքի դասագիրքը, որը սերնդեսերունդ փոխանցում է նրա իմաստությունը, կենսափիլիսոփայությունը:

Ժողովրդական բանահյուսությունը ժողովրդի պատմական ճակատագրի ուսումնասիրության և պատմական յուրաքանչյուր կոնկրետ ժամանակաշրջանում գրականությունը նրա խորքերում հայտնաբերում է նոր արժեքներ, գաղափարագիտական նոր շերտեր:

Բանահյուսությունը նաև ժողովրդի պատմության գեղարվեստական վավերագիր է և իր անջնջելի կնիքն է թողել գրողների բազմաթիվ սերունդների գրական վարպետության հղկման, մայրենի լեզվի ողջ գեղեցկության դրսևորման վրա:

Ինչպես տեսնում ենք, առակը, որը նախատեսված է դաստիարակչական նպատակով, կարող է դիտարկվել նաև որպես բարոյական օրենք՝ իրավական կամ հռոմեական մաքսիմներից մեկը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. *Գիլավյան Մ.* Նորագույն շրջանի հայ մանկական պոեզիայի զարգացման միտումները, Եր., 2000. – 146 էջ.
2. *Գիլավյան Մ.* Ժամանակակից հայ մանկագիր բանաստեղծներ, Ե., 2004. – 86 էջ.
3. *Խաչատրյան Պ.* «Բարի արև», Եր., 1989. – 146 էջ.
4. *Ջրբաշյան Էդ.* Գրականության տեսություն, Եր., 1980. - 498 էջ.

БАСНЯ «СТРЕКОЗА И МУРАВЕЙ» В ИНТЕРПРЕТАЦИИ ПАТВАКАНА ХАЧАТРЯНА

М. М. ГИЛАВЯН

gilavyan.meline@mail.ru

АГПУ им. Х. Абовяна

В статье рассматривается воспитательное, познавательное значение и художественные особенности басни армянского детского писателя периода Нового времени Патвакана Хачатряна. Антитеза ленивая стрекоза - трудолюбивый муравей у П.Хачатряна раскрывается отношение к таким чертам характера, как трудолюбие и лень. Советов и рекомендаций читателям автор не дает. Он в художественной форме представляет критику порочных черт и особенностей человеческого характера в простой и доступной литературной форме, предоставляя читателю делать выводы самостоятельно. Роль притчи велика как с точки зрения философии, так и нравственности. Отмечая воспитательное значение басенного жанра притчеобразного содержания в формировании детей, мы можем рассматривать произведение П.Хачатряна также как одну из юридических или римских максим для взрослых.

Ключевые слова и выражения. фольклор, басня, сюжет, современный период, устное народное творчество

**THE PARABLE "THE DRAGONFLY AND THE ANT" BY PATVAKAN
KHACHATRYAN'S INTERPRETATION**

M. M. GILAVYAN

Kh. Abovyan ASPU

The article examines the issues about educational, cognitive, and aesthetic uniqueness of the parable-poem by modern writer Patvakan Khachatryan. With the contrast of the lazydragonfly and hardworking ant, P. Khachatryan develops a certain attitude towards laziness and diligence. He doesn't give advice to his readers, but with accessible and simple artistic methods criticizes the bad traits of human character, leaving the conclusion to the reader

Key words and expressions: folklore, fable, plot, modern times, verbal art.

Информация о статье: статья поступила в редакцию 26 августа 2023 г., подписана к печати в № 2 (117) 2023 27.10.2023.